ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
07.04.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԶԱՎԱԽՔ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԶԱՎԱԽՔ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02512266
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 9 ՉԿԱ
1.4 Պետական գրանցման համարը		211.171.04030
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1991-12-30
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10645345
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.javaxq.am
1.8 Էլեկտրոնային փոստը		accounting@edentour.am
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՇԻՐԱԿ	ԹՈՐՈՍՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են օրենքով սահմանված կարգով.		
1.Նպաստել Ջավախքի հայությանը տեղում պահելու, նրանց կենսապայմանների ապահովման, Հայաստանի հետ կապերի ամրապնդման և տարածաշրջանում առաջացող տարատեսակ խնդիրների լուծմանը,		
2.Նպաստել հայ և վրացի ժողովուրդների դարավոր բարեկամության ամրապնդմանը, Ջավախքի հայ բնակչության կրթական, մշակութային և հոգևոր կարիքների բավարարմանը,		
3.Կազմակերպել ուսումնանյութական և գիտամեթոդական օգնություն Ջավախքի հայկական դպրոցներին, հատուկ աշխատանք տանել շնորհաշատ երեխաների հետ, օգնել ու օժանդակել դպրոցների վերանորոգման աշխատանքներին, դրանք ապահովել և համալրել ուսումնամեթոդական և անհրաժեշտ այլ նյութերով ու սարքավորումներով,		
4.Կազմակերպել Ջավախքի պատմամշակութային հուշարձանների, արհեստների, երգի ու պարի, մշակութային այլ արժեքների ուսումնասիրություն, նպաստել ուսումնասիրությունների արդյունքների ամփոփման ու հրատարակման գործին, կազմակերպել անհրաժեշտ օգնություն տարածաշրջանի եկեղեցիների վերանորոգման ու դրանց գործող դարձնելու գործում,		
5.Առանձնահատուկ ուշադրություն դարձնել Ջավախքում ավանդական դարձած մշակութային միջոցառումների անցկացմանը: Օժանդակել Ջավախքից և նրան հարող տարածքներից սերված հանրահայտ գործիչների հուշարձանների պատրաստմանը, թանգարանների ստեղծմանը, նոր մշակութային միջոցառումների կազմակերպմանը,		
6 ՀՀ առողջապահության համակարգի համապատասխան ծառայությունների հետ միասին կազմակերպել բժշկական օգնություն Ջավախքի բուժհիմնարկներին, նպաստել տեղի բնակչության բուժսպասարկման բարելավման ու այդ ոլորտի կարիքների բավարարման գործին,		
7.Գործող օրենսդրության սահմաններում իր ընտրովի մարմնի միջոցով պետական տնտեսական հասարակական ու քաղաքական մարմիններում ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքներն ու շահերը.		
8.Անհրաժեշտության դեպքում իր անդամներին ցուցաբերել նյութական օգնություն՝ իրենց մասնագիտական որակավորումը բարձրացնելու նպատակով.		
9.Փոխադարձ կապեր հաստատել մշակույթի բնագավառում ներհանրապետական ու միջազգային հասարակական, գրական, գեղարվեստական ու գիտամշակութային կազմակերպությունների հետ, մշակել ու իրականացնել նպատակային ծրագրեր, փոխանակել համապատասխան տեղեկատվություն,		
10.Իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:		
11.Կազմակերպությունն իր կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման նպատակով, այդ նպատակներին և խնդիրներին համապատասխան, կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնակցել ՀՀ հասարակական, գրական, մշակութային կյանքին, կազմակերպել և ծավալել գիտաստեղծագործական, մշակութային և լուսավորչական գործունեություն:		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		200
4.2 Կամավորների թիվը		500
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		0

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման, հարաբերությունների սերտացման և հայրենադարձության խթանման	Երևան	Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդում, հարաբերությունների սերտացում և հայրենադարձության խթանում	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին	Վրաստան	Ավարտված	ջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին	Ավարտված
2	Ամառային մշակութային ճամբար Ջավախքում	Վրաստան	Ավարտված	Ամառային մշակութային ճամբար Ջավախքում	Ավարտված

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	31,396,935
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	8,333,333	Հանրային Կապերի և Տեղեկատվության Կենտրոն ՊՈԱԿ
2	1,970,300	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	10,303,633	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	21,247,378
10.2 Գույքը	
Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը	21,247,378

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	10,303,633
11.2 Գույքը	
Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը	10,303,633

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____6_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

«ՋԱՎԱԽՔ»

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2022թ.

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2023

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ջավախք» հայրենակցական բարեգործական հասարակական կազմակերպության անդամներին և շնորհատուներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ջավախք» հայրենակցական բարեգործական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ նաև Կազմակերպություն) կից ներկայացված 2022 թ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունը՝ հանրային (պետական կամ համայնքային) միջոցներից ֆինանսավորման մասով, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված և ՀՀ ՊԵԿ նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված ՀՀ ՊԵԿ ներկայացվող հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները (այսուհետ միասին՝ Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն):

Մեր կարծիքով կից ներկայացվող Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, բոլոր էական առումներով, պատրաստված է ՀՀ ՊԵԿ-ի նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Այլ հարցեր. հաշվետվության պատրաստման հիմունքը

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքին, որ Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը, ինչպես նշված է սույն եզրակացության *«Կարծիք»* հատվածում, պատրաստված է ՀՀ ՊԵԿ-ի նախագահի 2020թ. մայիսի 27-ի N 477-ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան: Այդ պահանջները ենթադրում

են հաշվառման դրամարկղային հիմունքի կիրառում, որի ներքո գործարքներն ու այլ դեպքերը ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ դրամական միջոցները ստացվում կամ վճարվում են, այլ ոչ թե այն ժամանակ, երբ ծագում է դրամական միջոցները ստանալու իրավունքը կամ վճարում կատարելու պարտականությունը: Հետևաբար, այս հաշվետվությունը կարող է տեղին չլինել այլ նպատակների համար: Այս հանգամանքի վրա ուշադրություն ենք հրավիրում, քանզի բուն Հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվության մեջ նշված տեղեկատվությունը բացահայտելու համար հատուկ դաշտ նախատեսված չէ: Այս հանգամանքի կապակցությամբ մեր կարծիքը չի ձևափոխվել:

Ղեկավարության պատասխանատվությունը հաշվետվության համար

Կազմակերպության նախագահությունը պատասխանատու է կազմակերպության գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ինքն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ հաշվետվության պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Կազմակերպության նախագահությունը նաև պատասխանատու է Կազմակերպության գործունեության հաշվետվության պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը հատուկ նպատակի հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք հատուկ նպատակի հաշվետվությունը, ամբողջությամբ վերցրած, զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ հատուկ նպատակի հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակի հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- գնահատում ենք հատուկ նպատակի հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Կազմակերպության ղեկավարությանն աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արթուր Հարությունյան

Տնօրեն, որակավորված աուդիտոր,
ՀԳԳՀ՝ 2 20 0017

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

30 մայիսի 2023

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 21.07.2023 22:03